ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ԱՐԵԳԻ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑՆԵՐ
(ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑ)

Ժ. 01. 06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱԼՈՅԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԱՐԱՄԻ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄՈՒՇԵՂ ՄԱՅԻՍԻ

բանասիրական գիտությունների թեկնածու

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՏԱՐՈՆ ՌՈՒԴՈԼՖԻ

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մայիսի 8-ին՝ ժամը 14^{30}-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան $52^{ա}$, ԵՊՀ-ի ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. ապրիլի 5-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է մամուլի տեղեկատվական արդյունավետ միջոցներին՝ ղարաբաղյան հիմնահարցի համատեքստում: Այսօր տեղեկատվական քաղաքականությունը կարևորագույն զենք է յուրաքանչյուր պետության համար, քանի որ հենց նրա միջոցով կարելի է ձևավորել հասարակական կարծիք:

Աշխատանքում մասնավորապես շեշտադրվում է, որ ղարաբաղյան հակամարտությունը ոչ միայն արցախահայության ազատագրության համար մղված պատերազմ էր, այլև դրանից էլ առավել՝ միակ հնարավորությունը Հայաստանը թուրք-ադրբեջանական գերիշխանությունից փրկելու համար: Միմիայն շնորհիվ ղարաբաղյան ազատամարտի փայլուն հաղթանակների հաջողվեց ամրապնդել ու կայունացնել Հայաստանի ռազմական անվտանգությունը: Արցախի հայաթափության կամ Արցախում հայկական զինված հզոր ուժի չեզոքացման դեպքում Հայաստանն անխուսափելիորեն կհայտնվեր թուրքական թելադրանքի տակ և չէր վերապրի ո՛չ հոգևոր, ո՛չ էլ տնտեսական զարգացում: Հայաստանին մահացու հարված հասցնելու խնդիրը կատարելու էր Ադրբեջանը, իսկ Թուրքիան մնալու էր վարագույրի հետևում՝ խուսափելով Ռուսաստանի հետ բախումից ու միջազգային անցանկալի բարդություններից և քննադատությունից: Սակայն, շնորհիվ Արցախում և Հայաստանում ժամանակին կազմակերպված ինքնապաշտպանության, այս ծրագրերը դատապարտվեցին լիակատար ձախողման:

Ատենախոսության՝ որոշակի տրոհումներ պարունակող երեք գլուխներում հաջորդաբար գնահատվում են տեղեկատվամիջոցների կիրառման նոր եղանակները ղարաբաղյան հակամարտության ընթացքում, մատնանշվում են այն հիմնական գործոնները, որոնք ձևավորում են հակամարտության ներկա փուլը, տրվում են հակամարտության կարգավորման հնարավոր տարբերակները և դրանցում ԶԼՄ-ների դերը: Ներկայացվում են «տեղեկատվական պատերազմ» հասկացության վերաբերյալ արդիական պատկերացումներն ու հարակից այլ խնդիրները:

Աշխատանքում հատկապես ընդգծվում է այն կարևորագույն տեսակետը, որ ղարաբաղյան հակամարտության էական տարբերակիչ առանձնահատկությունը պայմանավորված է հակամարտության ծագման պատճառներով և նրա զարգացման բնույթով: Պատմական բազմաթիվ փաստերը հիմք են տալիս պնդելու, որ տարածքային վեճի առաջացման սկզբից ի վեր հայկական այդ տարածքի հանդեպ ադրբեջանական պետության իշխանությունը հաստատվել ու պահպանվել է բռնությամբ:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման արդիական է, քանի որ հնարավորություն է տալիս քննելու ղարաբաղյան համակարտության զարգացման արդի փուլի օրինաչափություններն ու զարգացման միտումները, այդ համատեքստում՝ տեղեկատվամիջոցների դերակատարումը և հակամարտող կողմերի կողմից իրականացվող տեղեկատվական պատերազմների մեթոդները: Նշենք, որ հայ իրականության մեջ վերոնշյալ զարգացումները դեռևս լիարժեք հետազոտված չեն: Աշխատանքում գիտականորեն հիմավորվում է ԶԼՄ-ի՝ որպես համակարտության մեջ էական դերակատար լինելը, ցույց են տրվում տեղեկատվական սխալ քարոզչության բացասական հետևանքները:

ԶԼՄ-ներն ի զորու են սրելու եղած լարվածությունը և ուժգնացնելու տարաձայնությունները, սակայն նրանք նաև օժտված են իրադարձությունների լայն սպեկտրի լուսաբանման, աղբյուրները տարբերակելու, ավելի շատ ձայներ (և ոչ միայն ընտրանու ձայները) հնչեցնելու, լրատվությունից աչառությունը հետևողականորեն բացառելու միջոցով պառակտման գծի երկու կողմերի միջև վստահություն կառուցելու ներուժով: Հայաստանյան և ադրբեջանական ԶԼՄ-ների մոնիտորինգի արդյունքները ցույց են տա-

լիս, թե ինչպես գլխավոր թերթերի հրատարակած հոդվածներում տեղ գտած անճշտությունները երկու երկրներում էլ, առանց որևէ նոր կամ անհրաժեշտ տեղեկություն հաղորդելու, հասարակական գիտակցության մեջ բացասական համատեքստ են ստեղծում, որը կասեցնում է երկխոսությունն ու փոխըմբռնումը: Չունենալով մեկը մյուսի մասին ավելի բարեխիղճ ու անաչառ, բացասական ճարտասանությունից և կարծրատիպերից զերծ տեղեկատվություն՝ Հայաստանն ու Ադրբեջանը կշարունակեն միմյանց թշնամաբար վերաբերվել:

Ատենախոսությունն ունի նաև գիտագործնական նշանակություն. համապատասխան կառույցները կարող են այն օգտագործել ինչպես տեղեկատվական պատերազմներ վարելու, այնպես էլ հակամարտության կարգավորման բանալիներ գտնելու համար: Այստեղ պարփակված նյութերը կարող են օգտագործվել նաև դասախոսությունների և գործնական հանդիպումների ժամանակ, ինչպես նաև նոր նյութ դառնալ հետագա ուսումնասիրությունների համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան մամուլի տեղեկատվական արդյունավետ միջոցների՝ ղարաբաղյան հիմնահարցի համատեքստում գիտատեսական քննությունն է, իսկ նպատակը՝ հակամարտության ներկա իրավիճակի, դրա զարգացման և հեռանկարների համալիր վերլուծությունը տարածաշրջանում քաղաքական գործընթացների ձևափոխման պայմաններում:

Ատենախոսության նպատակին համապատասխան՝ փորձ է արվել լուծել հետևյալ հիմնախնդիրները.

ա) գնահատել ու բնութագրել տեղեկատվամիջոցների կիրառման նոր եղանակները ղարաբաղյան հակամարտության ընթացքում,

բ) որոշել այն հիմնական գործոնները, որոնք ձևավորում են հակամարտության ներկա փուլը,

գ) տեսանելի դարձնել հակամարտության կարգավորման հնարավոր տարբերակները և դրանցում ՁԼՄ-ների դերը,

դ) բացահայտել Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերությունների կարգավորման հնարավոր իրական ճանապարհները,

ե) վեր հանել տարածաշրջանի քաղաքական գործընթացներում ներգրավված արտաքին հիմնական ուժերի դերակատարումն ու հետաքրքրությունները, նախանշել նրանց համար առաջնահերթությունները ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

Աշխատանքի նպատակներից են նաև Ադրբեջանի կողմից տեղեկատվական ոլորտում կիրառվող մեթոդաբանության առանձնահատկությունների բացահայտումը և այդ երկրում առկա որոշ տեղեկատվական ռեսուրսների ներկա իրավիճակի լուսաբանումը:

Այդ համատեքստում մասնավորապես փորձել ենք՝

ա) ներկայացնել «տեղեկատվական պատերազմ» հասկացության վերաբերյալ արդիական պատկերացումները,

բ) քննարկել Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականության համակարգը և տեղեկատվական գործողություններում կիրառվող մեթոդաբանությունը:

Լեռնային Ղարաբաղին առնչվող հայկական և ադրբեջանական պատմական տեսանկյունները քննելիս նկատելի է, որ նրանցից յուրաքանչյուրն էլ իր հատվածին բնութագրում է որպես խաղաղասեր ու բնիկ՝ պատմական կտրվածքում վերագրելով իրեն բացառապես դրական առանձնահատկություններ: Եվ, ընդհակառակը, հայերն ու ադրբեջանցիներն իրենց տեսանկյուններում հակառակ կողմին ներկայացնում են որպես մահացու թշնամի, որն իր ամբողջ պատմության ընթացքում կոտորում էր տեղա-

բնիկներին ու ոչնչացնում նախնիների մշակութային ժառանգությունը տարածաշրջանային տերությունների՝ Թուրքիայի և Ռուսաստանի ծուլման և խտրական քաղաքականության միջոցով: Երկու խմբի հիշողությունը պարունակում է հակառակ կողմի ձեռքով ազգակիցների կոտորածների մասին դեպքերի հիշողությունը: Երկուսն էլ հակառակ կողմի պատմական նկարագրությունները համարում են կեղծ. անգամ, երբ խոսվում է ժողովրդագրական տվյալների մասին, յուրաքանչյուր կողմ հղում է կատարում այն տվյալներին ու աղբյուրներին, որոնք համապատասխանում են իր պահանջներին՝ պարզապես արհամարհելով այլ ժամանակաշրջաններում հավաքված և իրենց պատկերացումներին հակասող տվյալները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ կատարվել է ղարաբաղյան հակամարտության առանձնահատկությունների, նրանում ընդգրկված բոլոր հիմնական կողմերի դերակատարման համալիր վերլուծություն՝ հաշվի առնելով տարածաշրջանային յուրահատկություններն ու դրանցում գերտերությունների և այլ պետությունների շահերի ու ռազմավարական հետաքրքրությունների բախումները:

Խորհրդային Միության փլուզումը և սոցիալ-տնտեսական միասնական տարածության ապահնտեգրացումը հետխորհրդային շրջանի երկրներին առաջադրեց մի շարք խնդիրներ. Անդրկովկասի նորանկախ պետությունները հայտնվեցին ինչպես ներքաղաքական, այնպես էլ աշխարհաքաղաքական բացարձակապես նոր իրավիճակում: Եվ ահա Հարավային Կովկասում ժողովրդավարական գործընթացների զարգացման հզոր զենք են հանդիսանում նոր տեղեկատվամիջոցները. քաղաքական համակարգերի արդիականացման և հակամարտությունների սրման կամ հանգստացման գործում հսկայական դերակատարում ունեն ԶԼՄ-ները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Հետազոտությունը կատարվել է համակարգային, համեմատական վերլուծության մեթոդներով, հիմնախնդրային մոտեցմամբ, այդ թվում նաև այլ համընդհանուր գիտահանրամատչելի մեթոդներով ու մոտեցումներով, որոնք լայնորեն օգտագործվում են ժամանակակից քաղաքագիտական, հասարակագիտական և այլ հարակից գիտություններում: Համակարգային վերլուծության մեթոդը հնարավորություն է տվել դիտարկել ղարաբաղյան հակամարտությունն ու այդ հակամարտության տարբեր տեսանկյունները և դրանք լուսաբանող տեղեկատվամիջոցներն ամողջության մեջ, ինչպես նաև դրանց առանձին բաղադրիչները փոխազդեցության համատեքստում: Համեմատական վերլուծության մոտեցումը հնարավորություն է ընձեռել համադրել տարածաշրջանի մի քանի հակամարտություններ ու ներհակ հարաբերություններ, ինչպես նաև վեր հանել հակամարտության գոտում հնարավոր մարտահրավերների զարգացումը, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Ատենախոսության մեջ կիրառվել է ինչպես տեսամեթոդական մոտեցումը, այնպես էլ նշված ոլորտում իրականացվող տարբեր կազմակերպությունների քաղաքականության վերլուծությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են Հայաստանի Հանրապետության գիտական հանդեսներում և ժողովածուներում տպագրված հոդվածներում: Ուսումնասիրությունը քննարկվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնում ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացված են հարցի պատմությունը, ատենախոսության նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը, հիմնավորված են թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

1.1. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ

1918-ին թուրքական զորքերի կողմից Անդրկովկաս կատարված ներխուժման և 1918-1920 թվականներին ադրբեջանական զորքերի ու անկանոն զինված ավազակախմբերի հետ համատեղ իրականացված հայաբնակ շրջանների էթնիկ զտումների հետևանքով մորթվեցին և սովից ու զանազան համաճարակներից զոհվեցին ավելի քան 300 հազար հայեր:Այս ոչ լրիվ փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Ադրբեջանի իշխանությունների կողմից քաղաքացիական բնակչության նպատակասլաց բնաջնջում է իրականացվել՝ ըստ ազգային հատկանիշի, այսինքն՝ 1918-1920թթ. ներկայիս Ադրբեջանի տարածքում, մինչ այդ Թուրքիայում, փորձված մեթոդներով շարունակվել է հայերի միտումնավոր ցեղասպանությունը:1920-ականներին, հիմնականում Ձիյա յոք Ալփի ջանքերով, պանթուրքիզմի ծրագիրն ստացավ վերջնական ձևավորում:1988-1994թթ. Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի տարածքում տեղ գտած իրադարձությունները (Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Ադրբեջանի այլ բնակավայրերում), ակնհայտորեն միևնույն թուրքական սցենարով կատարված հայերի ջարդերը, կողոպուտներն ու սպանությունները, ԼՂԻՄ և մարզին հարակից հայերով խիտ բնակեցված շրջանների քաղաքացիական բնակչության տեղահանությունը, ապա և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ձեռնարկված ռազմական ագրեսիան նույնպես վկայում են վերը նշված տեսակետների օգտին:

Այսպիսով, թուրք-ադրբեջանական քաղաքականությունը և դրա հետ կապված՝ հայերի ցեղասպանության նկրտումներն այն հիմնական գործոններն են, որոնք որոշեցին ոչ միայն հայ-թուրքական դիմակայության, այլև նրա բաղկացուցիչ մասի՝ հայ-ադրբեջանական հակամարտության սրությունը:

1.2. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ

XX դարավերջը նշանավորվեց կոմունիստական համակարգի քաղաքական և տնտեսական ճգնաժամով, և Կրեմլը որոշեց վերահսկել իրավիճակը՝ էթնիկ, կրոնական ու սոցիալական տարբեր խմբերն իրար հետ բախելու միջոցով: Այսինքն՝ ըստ որոշ տեսաբանների՝ նույնիսկ եթե հայկական և ադրբեջանական կողմերին պետք չէր խնդրի վերածումը զինված բախման, ապա երրորդ կողմի առկայությունը, որը շահագրգռված էր Հարավային Կովկասում հակամարտության առկայությամբ, ստեղծեց լուրջ հիմք՝ ղարաբաղյան խնդիրը նախկին ԽՍՀՄ տարածքի ամենադժվար ու արյունահեղ հակամարտության վերածման համար: ԶԼՄ-ներն օգտագործվում էին ազգերի միջև ատելություն սերմանելու և բորբոքելու համար:

Ղարաբաղյան խնդրի այսօրվա մեկնաբանության մեջ հիմնական հակասությունն այն է, որ կողմերից յուրաքանչյուրը Լեռնային Ղարաբաղը համարում է իր «պատմական» տարածք՝ բերելով պատմական բազմաթիվ ապացույցներ: Հենց սրա հետ է կապված նաև այն, որ վերջին տարիներին և՛ պաշտոնական, և՛ հասարակական-քաղաքական մակարդակներում ինչպես հայկական, այնպես էլ ադրբեջանական կողմը մեծ ուշադրություն է դարձնում պատմական փաստերին և դրանց մեկնաբանություններին: Ասել է թե՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրն անցել է Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային ու պատմական վեճի հարթություն, որտեղ կողմերից յուրաքանչյուրը համոզված է սեփական ճշմարտության մեջ:

Խաղաղ համագործակցության ու փոխզիջման ավանդույթների, քաղաքական և կրոնական հանդուրժողականության ավանդույթների բացակայության պայմաններում, երբ ԶԼՄ-ները Հայաստանում և Ադրբեջանում բավականաչափ ազատ չեն, պարզ է, որ ղարաբաղյան հակամարտությունը չի ունենա արագ ու փոխադարձ ընդունելի լուծում: Ընդհանրապես, նման հակամարտությունների լուծման փորձը ցույց է տալիս, որ դրանք լուծվում են դանդաղ և դժվար:

Բերվում են բազմաթիվ պատճառներ, ըստ որոնց՝ Ղարաբաղի հայերն այլևս անհնարին են համարում Ադրբեջանի կազմի մեջ ապրելը. առաջինը Ադրբեջանի վարչական կառավարման տակ հայերի ապրելու պատմական փորձն է, երբ պատմական կարճատև ժամանակահատվածում լուրջ փոփոխությունների ենթարկվեց Նախիջևանի ԻՀ և ԼՂԻՄ ժողովրդագրական իրավիճակը. երկրորդն այն է, որ հայկական կողմերը (Հայաստանը և ԼՂ) նշում են, որ ժամանակակից աշխարհը շատ դինամիկ է, միջազգային կանոնները փոփոխվում են ժամանակի պահանջների համաձայն, և մոտ ապագայում հնարավոր է միջազգային հիմնական սկզբունքների և նորմերի լուրջ վերանայում, այդ թվում՝ դեպի տարածքների իրավունքների ընդլայնմանը և ազգերի ինքնակառավարման իրավունքի սկզբունքի (այստեղ հողում է կատարվում ինքնավարություն ստացած Կոսովոյի վրա և Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչմանը):

Ադրբեջանը չի ցանկանում ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը՝ հիմնավորելով դա այն փաստով, որ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքը դեռ մնում է հիմնական միջազգային սկզբունքներից մեկը, և դեռ ոչ ոք այն չի վերացրել:

Բախման մեջ ի՞նչ դեր են խաղում ԶԼՄ-ները և արդյոք հնարավո՞ր է հասնել հասարակական կարծիքի հակամարտողականության մակարդակի նվազեցմանը մինչև քաղաքական համաձայնություններին հասնելը:

Հայկական և ադրբեջանական մամուլի հետազոտությունները ցույց են տալիս, որ մեր հասարակություններում գերիշխում է անվստահությունը, և ուժեղ են վախերը մեկը մյուսի նկատմամբ: Մեր երկրներում ավելի են արմատանում հայ-թշնամու և ադրբեջանցի-թշնամու կարծրատիպերը: Այսպես, 2012 թվականի հունվար-մարտ ամիսներին ե-

րևանի մամուլի ակումբն անցկացրել է մամուլի խաչաձև հետազոտում Հայաստանում և Ադրբեջանում (երբ ադրբեջանական փորձագետը գնահատում է հայկական մամուլը, իսկ հայ փորձագետը գնահատում է ադրբեջանականը)՝ մեկը մյուսի մասին բացասական նյութ գտնելու համար: Ստացված արդյունքների պատկերը չափազանց խոսուն է. և՛ հայկական, և՛ ադրբեջանական մամուլում բարձր տոկոս են կազմում միմյանց մասին բացասական իմաստ պարունակող նյութերը: Տարբերությունը միայն այն էր, որ քանակական առումով ադրբեջանական մամուլում ավելի շատ բացասական նյութ կա հայերի մասին, քան ադրբեջանցիների մասին՝ հայկականում:

1.3. ՄԱՄՈՒԼԸ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախյան հակամարտության կարգավորմանն առնչվող հրապարակումները, չնայած իրենց բազմազանությանը, ունեն մեկ թերություն. որպես կանոն, հստակ չի բնորոշվում այն իրավիճակը, որում գտնվում է հարավկովկասյան տարածաշրջանը, և չի նշվում փոխկապակցվածությունն այն գործընթացների հետ, որոնք տեղի են ունենում տարածաշրջանում: Ավելին, ըստ էության չեն վերլուծվում արդիական մի շարք հարցեր, որոնք կօգնեն հասկանալու ղարաբաղյան հակամարտության էությունը: Այսպես օրինակ՝

1. Որպես կանոն, պատշաճ ուշադրության չի արժանանում այն էական դերակատարումը, որ կարող են ունենալ Կասպից ծովի ռեսուրսները ոչ միայն կարգավորման հարցերում, այլև այն հանգամանքը, որ դրանք որպես էական գործոն կարող են ազդել Հարավային Կովկասի տարածաշրջանի կայուն իրավիճակի վրա:

2. Տեղեկատվական ի՞նչ տեխնոլոգիաներ կարող են կիրառել միջազգային կենտրոնները ղարաբաղյան հակամարտության գոտում՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար:

3. Աշխարհաքաղաքական ի՞նչ գործընթացներ են տեղի ունենում այսօր, և ի՞նչ տեղ ունի դրանցում հարավկովկասյան տարածաշրջանը:

Մինչ ներկա ժամանակները լրագրողները դիտարկում էին ղարաբաղյան հակամարտությունը կանխատեսվող որոշակի անվտանգության շրջանակներում, այսինքն՝ դիտարկում էին տարածքային ամբողջականության, ժողովրդավարության, համերաշխության և այլ սկզբունքների պահպանումը: Միաժամանակ Հայաստանի մամուլը հետևողականորեն չէր արձանագրում այն նշանակալի փոփոխությունները՝ գերտերությունների հետաքրքրությունները էներգո-հաղորդակցային նախագծերում, որոնք այսօր էական դեր են խաղում Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացների ժամանակ:

Այսպես, տեղեկատվական նյութերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք լայն զանգվածների վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցության հետ՝ ԶԼՄ-ի միջոցով՝ Ադրբեջանի մասնակցությամբ և Թուրքիայի անմիջական աջակցությամբ:

Վարելով բաց դռների քաղաքականություն՝ Ադրբեջանը եռանդագին ներգրավում էր արտերկրյա ներդրումներ՝ այդ ամենով հող ստեղծելով նաև Լեռնային Ղարաբաղում իր հետագա պլանների իրագործման համար: Կասպից ծովի ադրբեջանական հատվածի Ազերի-Չիրագ-Գյունեշլի հանքավայրերում սկսվեցին նավթի առաջին վերամշակումները: Պայմանագրի մասնակիցներ դարձան Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ պետությունների նավթային ընկերությունները, և դա օգնեց Բաքվին՝ վարկանիշ ձեռք բերելու միջազգային ներդրումային և վարկային կազմակերպությունների ռազմավարական նախագծերի իրացման առումով, ինչպես, օրինակ, Բաքու-Թբիլիսի-

Ջեյհան հիմնական խողովակաշարը՝ միջազգային շուկա էներգոռեսուրսների արտահանման համար:

Օգնության նետվեցին նաև արտասահմանյան զանգվածային լրատվամիջոցները: Այսպես, "The Washington Times"–ը գրում է. «Չի կարելի ասել, որ նախագծի աշխատանքներն անցնում էին արագ տեմպով, բայց և այնպես 1992 թվականին սկսվեցին արդեն դիտարկվել միջազգային շուկա ապագայում նավթի տեղափոխման երթուղու ընտրության հարցերը»[1] :

Ելնելով համաշխարհային գերտերությունների՝ Ադրբեջանի հանդեպ ռազմավարական վերոնշյալ հետաքրքրություններից՝ անհրաժեշտ էր կազմակերպել առավել անվտանգ երթուղի: Արդյունքում անհրաժեշտություն առաջ եկավ ներգրավելու նաև երրորդ, նույնիսկ չորրորդ կողմի՝ նավթի և գազի տեղափոխումը կազմակեպելու համար: Եվ Թուրքիան՝ որպես Ադրբեջանի մեծ եղբայր, ցանկացած միջոցով եռանդագին փորձում էր հետաքրքրել Արևմուտքին խողովակաշարի շինարարությամբ, իսկ իր տարածքը ներկայացնել որպես միակ ընդունելի ուղղությունը:

Միայն այն ժամանակ, երբ էներգո-հաղորդակցային նախագծերի վտանգներն առաջացրին շոշափելի տեղաշարժեր, հայաստանյան մամուլն սկսեց հրապարկել նյութեր նման բարդ իրավիճակից դուրս գալու անհրաժեշտության մասին: Գրվում էին բազմաթիվ հոդվածներ այն մասին, որ կասպյան տարածաշրջանի ադրբեջանական հատվածի նավթային գործոնը շատ առումներով կարող է ազդել արցախահայության հետագա ճակատագրի վրա, որն անթույլատրելի է թե՛ քաղաքական և թե՛ բարոյական տեսանկյունից: Սակայն լիովին արդարացիորեն կարելի է ենթադրել, որ մեր երկրի ընթերցողական զանգվածն ամեն դեպքում չէր հասկանում՝ ինչպես էներգո-հաղորդակցային նախագծերը և նավթային գործոնը կարող են ազդել Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների էության վրա: Չնայած հայաստանյան մամուլը, ի դեմս հայկական քաղաքական շրջանակների, հետապնդում էր ազնիվ նպատակ՝ բազմիցս փորձելով համոզել ազգաբնակչությանը և միջազգային հանրությանը, որ էներգո-հաղորդակցային նախագծերը չպետք է դառնան հիմնարար Լեռնային Ղարաբաղի հարցերում, սակայն ամեն դեպքում տպագիր նյութերի հետազոտությունը թույլ է տալիս պնդելու, որ ներկայացվող տեղեկատվությունը հիմնականում կառուցվում էր «կտրտված», երբեմն նաև խեղաթյուրված մեկնաբանությամբ, որն ուղղակի չէր կարող ամբողջովին բացահայտել ադրբեջանական քաղաքականության մարտավարությունը Լեռնային Ղարաբաղի շուրջ: Հակառակ կողմը միշտ օգտագործել է տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը թիրախային լսարանի վրա՝ ներառելով բոլոր հնարավոր միջազգային կազմակերպությունները՝ հասնելու համար հակամարտության՝ հօգուտ իրեն վերջնական լուծման: Չնայած բոլոր ջանքերին՝ գործարքի ստորագրման հարցի լուծումը, սակայն, հետաձգվեց: Շուտով նորընտիր նախագահ Հ. Ալիևը "Chicago Tribune"-ի հետ հարցազրույցում պարզաբանումներ տվեց, թվում է, արդեն պատրաստ պայմանագրի կնքման հետաձգման առնչությամբ. «Ես հասկանում եմ, որ Ադրբեջանով գայթակղված նավթային ընկերություններն ունեն սեփական տնտեսական հետաքրքրությունը: Դա լիովին բնական է: Բայց միևնույն ժամանակ մենք պետք է դնենք մեր երկրի շահը ավելի բարձր, քան այդ ընկերությունների շահն է»[2] :

---

[1] "**The Washington Times**", March 9, 1992.
[2] "**Chicago Tgribune**", 18 June, 1993.

1.4.ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ցանկացած խնդրի արդյունավետ լուծումները, պետք է հիմնված լինեն օբյեկտիվ խնդիրների համալիր քննություն վրա, դիտարկվեն դրանց առաջացման ու զարգացման դինամիկան ու հնարավոր մարտահրավերները, որոնք սպառնում են տարածաշրջանում կայունության և անվտանգության համակարգին: Անկայուն խաղաղությունը, որ ներկա փուլում պահպանվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում՝ ի հաշիվ ուժերի հավասարակշռության, կարոտ է այնպիսի արդյունավետ միջոցների, որոնք հակամարտության կարգավորման քաղաքական գործընթացների հետ միասին կարող են դառնալ իրական երաշխիք տարածաշրջանում խաղաղության և կայունության, կձևավորեն տարածաշրջանային անվտանգության հիմքը[3]:

Պետք է ընդունել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետազոտությունների ծավալն այնքան լայն է ու բազմազան, որ այդ աշխատանքների դասակարգման խնդիրը հեռու է միանշանակ լինելուց: Այս դեպքում նույն երևույթների վերաբերյալ կարծիքներն ու գնահատականները հակասական են՝ կախված նրանից, թե որ կողմի հեղինակ է կամ տարածաշրջանային գործընթացներում ներգրավված որ գերտերության շահերը պաշտպանողը. «Ըստ էության, այս բոլոր հակասական գնահատականները ծագել են Հայաստանի և Ադրբեջանի պատմության ու աշխարհագրության հիմնարար հարցերի շուրջ Հայաստանի և Ադրբեջանի հետազոտողների ավանդական անհաշտ վեճից»[4]:

Սա տպագիր մամուլի համար ստեղծում է որոշակի դժվարություններ՝ անաչառորեն հասկանալու համար հակամարտության դինամիկան, դրա զարգացման հեռանկարներն ու տարբերակները:Ղարաբաղյան հակամարտության մասին խոսելիս հարկ ենք համարում հակամարտությունը դիտարկել տարածաշրջանային և միջազգային զարգացումների շրջանակներում: Դիտելի է, որ Արևմուտքն ընդհանուր առմամբ ձգտում է Հարավային Կովկասի տարածաշրջանում ձևավորել հաստատություններ ու ներդնել համակարգ, որը կնպաստի տարածաշրջանում ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն այսօր տարածաշրջանի ամենակարևոր գործոններից մեկն է, որը կարող է ապակայունացնել ամբողջ տարածաշրջանը, չնայած հակամարտության հարցում status-quo-ի ցանկացած փոփոխությունն կարող է դրականորեն ազդել հայ-թուրքական հարաբերությունների վրա, որն էլ իր հերթին լավ հնարավորություններ կստեղծի Հարավային Կովկասում ԱՄՆ-ի ինտեգրացիոն ծրագրերի համար: Այս ամենը հնարավորություն կտա ԱՄՆ-ին հսկել հայ-իրանական և իրանա-ադրբեջանական հարաբերությունները Իրանի Իսլամական Հանրապետության աշխարհաքաղաքական մեկուսացման քաղաքականության շրջանակներում, քանի որ Վաշինգտոնի կարծիքով՝ հայ-ադրբեջանական հարաբերություններում առկա լարվածությունը Թեհրանին հնարավորություն է տալիս տարածելու իր ազդեցությունը Հարավային Կովկասում[5]:

---

[3]Տե՛ս **ЯзьковаА., КуприяновА**. ЧерноморскийузелФедеральныйинформационно-аналитическийжурнал "Сенатор" www.senator.net

[4]**Astorian S. H**. In Search of Their Forefathers: National Identity and the Historiography and Politics of Armenian and Azerbaijani Ethnogeneses I Donald D.Schwartz and Razmik Panossian. Nationalism and History: The Politics of State-Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia. - Toronto: University of Toronto Press, 1994.

[5]http://news.am/rus/news/111528.html, 2012թ. հունիսի 29:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ

2.1. ՀԱՅԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌԱՆՑ «ԿԱՊԵՐԻ»

Ճշմարտությունից հեռու չէ չեզոք ռազմագետ վերլուծաբանների՝ ինչ-որ տեղ ուշացած այն հուշարարությունը, որ աշխարհը դեռ պետք է ըստ արժանվույն գնահատի ադրբեջանական ագրեսիայի դեմ պայքարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարած հաղթանակի նշանակությունը: Շատերի կարծիքով՝ եթե պատերազմի մեջ ներգրավված հազարավոր վարձկանների հետ Ադրբեջանը հաղթեր, ապա այսօր իսլամական արյունալի էքստերմիզմի կրակով բռնկված կլիներ ամբողջ Մերձավոր Արևելքը...

1996 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մամուլի տեղեկատվության վարչությունը տարածեց հաղորդագրություն ադրբեջանական ազգային բանակի նախկին զինվոր ոմն Իսլամ Ջաբրաիլովի պատմածի մասին: Ըստ նրա՝ Բաքվից ոչ հեռու ադրբեջանցի զինծառայողների, ինչպես նաև չեչեն և աֆղան գրոհայիններ ի հատուկ համակազմի պատրաստմամբ զբաղվում են Թուրքիայից եկած հրահանգիչներ՝ նրանց սովորեցնելով սահմանակից պետություններում դիվերսիոն-հետախուզական աշխատանք կատարելու հնարքներ ու մեթոդներ[6]: Բաքուն իր ՋԼՄ-ներով անգամ այլևս չի թաքցնում, որ թուրք եղբայրներն անմիջականորեն մասնակցել են ադրբեջանական բանակաշինությանը, ցուցաբերել ռազմահումանիտար և հոգեբանական լուրջ օգնություն: Ավելին, պատերազմին մասնակցում էին մայրաքաղաքի մերձակա Նասոսնայա ավանում ծագումով ադրբեջանցի թուրքական գեներալ Վելի Քյուչուկի և բարձրաստիճան այլ սպաների գլխավորությամբ ռազմական նախապատրաստություն ստացած թուրքական գումարտակներ, որոնք կռվեցին Քելբաջարում:

Հայ ժողովրդի նկատմամբ պետականորեն ծրագրված և իրագործված եղեռնագործության պատասխանատվությունից խուսափելու և ցեղասպանության ճանաչումը հեռացնելու նպատակով Թուրիքան, միջոցների առջև կանգ չառնելով, շարունակում է օգտագործել տեղեկատվական, քաղաքական և դիվանագիտական բոլոր ռեսուրսները: Եվ այդ հարցը նրա կողմից վերածվել է միջազգային քաղաքական սակարկության առարկայի:

Վերջերս Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիպ Էրդողանը հերթական անգամ անդրադարձավ հայ-թուրքական հարաբերություններին՝ հերթական անգամ նշելով, որ հայ-թուրքական հարաբերությունները չեն կարող կարգավորվել առանց ղարաբաղյան հարցի լուծման: Նա ևս մեկ անգամ հաստատեց, որ կա Ղարաբաղի և Նախիջևանի խնդիր, ու դրանք Թուրքիայի խնդիրներն են. «Թուրքիան միշտ էլ եղել է Ադրբեջանի կողքին, Ղարաբաղի կողքին: Թող ոչ ոք չսպասի մեզնից այլ դիրքորոշում»[7]:

Սակայն նմանատիպ հայտարարությունները Թուրքիայի վարչապետի մակարդակով չեն սահմանափակվում: Թուրքիան ամեն ինչ անում է՝ ցույց տալու համար, որ հայ-ադրբեջանական հարաբերություններ քաղաքական մակարդակում գոյություն չունեն, որ Ղարաբաղի հակամարտությունը միայն իրենց խնդիրն է, և գնալով Հայաստանի հետ ցանկացած հարաբերության՝ Թուրքիան պահանջելու է զիջումներ Ղարաբաղի հարցում: Դրա վառ վկայություններից մեկն էլ 2008 թվականին ստորագրված և մեկ տարի անց տապալված հայ-թուրքական արձանագրություններն էին: Թուրքիան այսօր անում է հնարավորը ղարաբաղյան բանակցային գործընթացում՝ որպես առանձին կողմ ներգրավվելու համար, սակայն մինչև այսօր դա նրան չի հաջողվել:

---

[6]Տե՛ս **Felgenhauer P**. Russian-Turkish Militaiy Relations: much mutual respect, but misgivings Insight Turkey. 2002. Vol. 4, № 2, April-June.

[7]http://zham.am/index.php?lid=am&pageName=lrahos&id=465106709

2010 թվականի մարտի 24-ին Թուրքիայի նախկին արտգործնախարար, ներկայիս պետնախարար և փոխվարչապետ Ալի Բաբաջանը Բրյուսելում լրատվամիջոցներին հայտարարեց, թե Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացները մեծ փաթեթի երկու կարևոր մասերն են: Ապա ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին կոչ արեց աջակցել հայ–ադրբեջանական հարաբերությունների կարգավորմանը:Ամեն ինչ նորմալ կլիներ, եթե նման հայտարարությունները սահմանափակվեին միայն թուրք գործիչների մակարդակով, բայց այդպես չէ: 2009 թվականի հոկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի պետդեպարտամենտում արտաքին քաղաքականության գծով փորձագետ Ստրոբ Թելբոտը, խոսելով հայ-թուրքական տապալված արձանագրությունների մասին, հստակ ընդգծեց. «Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը կօգնի Հայաստանի և Ադրբեջանի միջև առկա ղարաբաղյան հակամարտության լուծմանը: Դա ռուսական և ամերիկյան շահերի հարց էր՝ Ղարաբաղի խնդրի լուծման գործընթացում: Եվ մենք հանդես եկանք ի նպաստ Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունների կարգավորման: Հայ-ադրբեջանական հարաբերությունները սերտորեն կապված են հայ-թուրքական հարաբերությունների հետ»[8]:

Փաստորեն, ոչ միայն Թուրքիան, այլև ԱՄՆ-ն ու այլ խոշոր տերություններ հաստատում են՝ հայ-ադրբեջանական հարաբերությունները նույն հայ-թուրքական հարաբերություններն են, ասել է թե՝ նրանք փաստում են, որ գոյություն չունի «հայ-ադրբեջանական հարաբերություն» ասվածը:

2.2. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ներկայումս նոր թափ է ստացել բախման հանգուցալուծման իսլամական գործընթացը: «Մեկ ժողովուրդ, երկու պետություն» ադրբեջանա-թուրքական տանդեմն աշխարհով մեկ դիվանագիտական ու լոբբիստական աշխատանք է ծավալում իսլամական երկրներն ու միջազգային կազմակերպությունները Հայաստանին ու հայությանը դիմակայելու, նրան հակադրելու համար:Եվրոպայում հակահայկական տրամադրություններ բորբոքելուն, ԶԼՄ-ների միջոցով մեզ՝ որպես ագրեսոր ու ահաբեկիչ ներկայացնելուն զուգընթաց՝ թուրքական հատուկ ծառայություններն ու զինվորականները ակտիվորեն գործում են հատկապես Հարավային Կովկասում, առաջին հերթին՝ Ադրբեջանում և Վրաստանում: Քանի որ Ադրբեջանը երկդիմի խաղ է խաղում՝ չկտրելով կապերը Ռուսաստանի հետ, ուստի Հայաստանի վրա ճնշում գործադրելու առումով Թուրքիայի համար ամենահարմար հենակետը մնում է Վրաստանը: Վերջինիս տարածքով շրջափակման միջոցով է հնարավոր Հայաստանի համար ստեղծել ծանր վիճակ և նրան դնել երկընտրանքի առջև. կա՛մ նոր պատերազմ, կա՛մ էլ զիջումներ Ղարաբաղի հարցում: Իր հերթին տարածաշրջանում թուրքական քաղաքականությունը համահունչ է Իրանին իր կամքը թելադրելու համար այդ երկրի շուրջը ճնշման գոտի ստեղծելու ԱՄՆ-ի ռազմավարական նպատակներին:

Այսօր մեր տարածաշրջանում Թուրքիան թիվ մեկ ագրեսորն է: Նա մեծապես շահագրգռված է, որ Ռուսաստանը դուրս մղվի տարածաշրջանից, պայքար է մղում Սև ծովի և Հարավային Կովկասի համար:

Մի հետադարձ անդրադարձ: Այսօր այլևս գաղտնիք չէ այն իրադրությունը, երբ 1993 թվականի հոկտեմբերին թուրքական դաշտային բանակն արդեն պատրաստվում էր մարտական գործողություններ սկսել Հայաստանի տարածքում (Երևանից մինչև Մեղրի), ինչը կանխվեց միայն ռուսական Պսկովյան ռազմաօդային-դեսանտային երկու

[8] Armenian Patriarch Lends Support to Turkeys EU Bid Star. 2009. 17 December, p. 6.

դիվիզիայի և Գյումրիում տեղակայված զորամիավորման միջամտության պատրաստականության սպառնալիքի շնորհիվ՝ փոխելով իրավիճակը: Թուրքական ծրագրերի ձախողումը մեծապես նպաստեց Ղարաբաղում մեր հաջողությունների ձեռքբերմանը:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ ուղղակի ագրեսիայի փոխարեն Թուրքիան այսօր փորձում է Վրաստանի միջոցով Հայաստանը շրջափակել հյուսիսից: Ըստ որում, Վրաստանում իրականացվող թուրքական ռազմական ու դիվանագիտական քաղաքականության առանցքային խնդիրներից է Հայաստանն արտաքին աշխարհից, հատկապես Ռուսաստանից մեկուսացնելը: Այս գործում որոշակի տեղ է հատկացվում մեր մյուս հարևանին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԱՏԵՍԱԿ

3.1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Եթե մինչև վերջերս պատերազմներ են մղվել հիմնականում տեղեկատվական ոլորտում, ապա հիմա նկատվում է հակադարձ կապ ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակով: Լրագրողները, նրանց հետ միասին և PR մասնագետները վաղուց արդեն դարձել են ցանկացած հակամարտության երրորդ ուժը, և կախված նրանից, թե որ կողմում են առավել ուժեղ խաղում, հաղթանակն էլ հենց այդ կողմին է հասնում: Ժամանակակից աշխարհում տեղեկատվության հոսքն այնքան տարաբնույթ ու հակասական է, որ առանձին մարդն ինքնուրույն դրանում ի վիճակի չէ կողմնորոշվելու: Այդ պատճառով առավել կարևոր տեղեկատվության ընտրությունը և ներկայացումը ԶԼՄ ամբողջ համակարգի համար հրատապ խնդիր է:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ղարաբաղյան հակամարտության առաջին փուլում, որպես հոգեբանական-տեղեկատվական ազդեցության միջոց, նախապատվությունը երկկողմանիորեն տրվում էր տպագիր ազդեցության միջոցներին. «Տպագիր ԶԼՄ-ների միջոցով սոցիալական դիրքորոշումների ձևավորումը ենթադրում է տպագիր հոդվածների և այլ տպագիր նյութերի միջոցով ազդեցություն զանգվածների վրա»[9]: Առավելապես օգտագործվում էին 1/16 և 1/32 ձևաչափի թերթիկներ, այսինքն՝ այնպիսիք, որոնք հեշտությամբ տեղ կհասնեին քարոզչական ռումբերի ու փամփուշտների օգնությամբ: Նմանատիպ թերթիկների բովանդակությունը մարդկանց մղում էր կատարելու որոշակի գործողություններ և ուներ որոշակի նպատակներ՝ զինված կազմակերպությունների ապակազմակերպում, նրանց մեջ ռազմական ոգու անկման առաջացում, հակառակորդի մեջ տագնապի, վախի մթնոլորտի ստեղծում և այլն:

Ղարաբաղյան հակամարտության պատերազմական շրջանում ադրբեջանցիները ևս օգտվել են զենքի այդ տեսակից: «Պատերազմի ժամանակ տարածված ադրբեջանական քարոզչական թերթիկները չէին կարող հասնել արդյունքի, որովհետև կազմվում էին մասնագիտական բազմաթիվ բացթողումներով,- գրում է Վ. Միրաքյանը:- Մասնավորապես հաշվի չէին առնվում թիրախային լսարանի առանձնահատկությունները և օգտագործվում էին քերականորեն անգրագետ տեքստեր»[10]:

1999-2001 թվականներին ՀՀ կառավարությունը կտրուկ փոխեց իր տեղեկատվա-

---

[9]**Веприцев В. Б.**, **Манойло А. В.**, **Петренко А. И.**, **Фролов Д. Б.**, Операции информационн-психологической Войны, Москва, 2005, стр. 48.

[10]**Միրաքյան Վ.**, Սոցիալական դիրքորոշումների ձևավորումը ԶԼՄ-ների միջոցով, Ատենախոսություն, Երևան, 2012, էջ 64:

կան քաղաքականությունը. խիստ հսկողության տակ առավ հակամարտության վերաբերյալ ներպետական շրջանառվող տեղեկատվությունը: Այս ժամանակահատվածում ակտիվորեն օգտագործվում էր ռադիոն: Մասնագետներն առանձնացնում են ռադիոհեռարձակման հետևյալ առանձնահատկությունները.

1. Ակուստիկան - ձայնի օգտագործումը՝ որպես ազդեցության գլխավոր արտահայտչամիջոց, և հնչող խոսքը՝որպես հիմնական ազդեցության միջոց:

2. Տեքստերի միատեսակությունը:

Հակամարտության սկզբում կիրառվող հոգեբանական-տեղեկատվական մեթոդների հետազոտությունը թույլ է տալիս առանձնացնել մի քանի գործոններ, որոնք իջեցրել են դրանց արդյունավետությունը: Նախ՝ մասնագետների թույլ գիտելիքներն են այդ ոլորտի հիմնական զենքերի, դրանց ազդեցությունների վերաբերյալ: Երկրորդ՝ աշխատանքներում ներգրավված չէին մասնագետներ, որոնք գերազանց կերպով տեղյակ կլինեին հակառակորդի ազգային-հոգեբանական առանձնահատկություններից:

